

ՍԱՐԳԻՍ ԿՈՒԿՈՒՆՅԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ
(Մահվան 100-ամյա տարելիցի առթիվ)

ԱԼՎԱՐԴ ՂԱԶԻՅԱՆ

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին ու Բեռլինի վեհաժողովին հաջորդած տասնամյակները կարելի է բնութագրել թուրքական լծից արևմտահայերին ազատագրելու վերաբերյալ հույսերի բորբոքման, վերածնության ժամանակաշրջան: Մերբիայի, Բուլղարիայի օրինակները չափազանց վարակիչ էին, թեև արդեն Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածը Բեռլինի վեհաժողովում փոխարինվել էր արևմտահայերին անպտուղ խոստումներով՝ 61-րդ հոդվածով, ու արևմտահայության պատվիրակությունը Խրիսյան Հայրիկի գլխավորությամբ վերադարձել էր վեհաժողովից, իսկ թղթե շերեփի պատմությունը բանահյուսական երանգ էր ստացել¹:

Ռուսական արքունիքը շարունակում էր պաշտպանել Հայկական հարցի դրական լուծումը: Իսկ Ռուսաստանի խոշոր քաղաքներում ուսանող հայ երիտասարդությունը ոչ միայն կրթություն էր ստանում, այլև մասնակից էր ու հաղորդակից ռուս առաջադեմ խմբերի միջավայրում իշխող հասարակական-քաղաքական, գերազանցապես՝ սոցիալական բնույթի գաղափարներին: Սակայն հայ երիտասարդությանը առավելապես հուզում էին ազգային-քաղաքական խնդիրները՝ արևմտահայ եղբայրների ազատագրության հարցերը: Արևելահայ հասարակական, մշակութային կյանքը համակված էր Ե. Շահագիզի, Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Մ. Պեշիկթաշյանի, Բաֆֆու ազատագրական պայքարի գաղափարներով, մարտաշունչ ստեղծագործություններով: Մինչդեռ արևմտահայ գավառներում ծնունդ առած փոքրաթիվ խմբերը, ինչպես նաև առանձին անհատներ զինված, անհավասար պայքար էին մղում հետզհետե սաստկացող թուրք և քուրդ կեղեքիչների ճնշումների դեմ (Մարկավագի, Կարինի «Պաշտպան Հայրենյաց», Չաթոյի, Շերոյի ինքնապաշտպանական ջոկատները): Իսկ արևելահայերն ուղիներ էին որոնում Արևմտյան Հայաստան մտնելու և եղբայրներին օգնելու՝ լուսավորելու, կրթելու, զինելու նպատակով:

Այդ վերջին ուղին էր ընտրել Մոսկվայի Լազարյան ձեմարանի ուսանող, 17-ամյա Ալեքսանդր Գոլոշյանը (Բաֆֆու հերոսի անունով իրեն Վարդան անվանող): Նրա առաքելությունը ողբերգական վախճան ունեցավ: 1889 թ. մայիսի 15-ին Հակոբ Մարկավագի հայդուկային խմբին միանալու նպատակով Պարսկաստանից Վասպուրական անցնելու ճանապարհին նա զոհվեց իր գաղափարակից ընկերոջ՝ Հ. Ագրիպայասյանի հետ՝ «երգիր» չհասած:

Ա. Գոլոշյանի գործունեությանը ծանոթ էին նրա հայրենի քաղաք Թիֆլիսում, այն որոշակի արձագանք ուներ հայ հասարակական շրջաններում: Անհամեմատ լայն արձագանք ունեցավ Մ. Կուկունյանի խմբի գործունեությունը:

¹ Հայկական սովետական հանրագիտարան, հ. 2, Երևան, 1976, էջ 403:

Մարգիս Մովսեսի Կուկունյանը ծնվել է 1866 թ. Ելիզավետպոլի նահանգի Նուխվա գավառի Նիժ գյուղում: Ավարտել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը: 1885 թ. գնում է Պետերբուրգ՝ կրթությունը շարունակելու: Մակայն այստեղ նա ավելի շուտ ստանում է քաղաքական, ազատագրական պայքարի գաղափարախոսության դասեր: Բալկանյան ժողովուրդների նորերս ազատագրված օրինակները նրա աչքի առաջ էին: Ս. Կուկունյանի շուրջը համախմբվում է մայրաքաղաքում ուսանող հայ երիտասարդության մի մասը և կազմավորվում է համախոհների մի խմբակ: Իր գաղափարակից ընկերներով նա ապրում էր արևմտահայերին ազատագրելու ուղիներ որոնելու հույսերով ու գաղափարներով: Պետերբուրգում Ս. Կուկունյանը ծանոթանում է Կ. Եզյանի հետ, որը լինելով ռուս բարձրաստիճան պաշտոնյա, շահագրգռված էր արևմտահայերի ազատագրությամբ և այդ հարցի վերաբերյալ սեփական ծրագիրն ուներ, որին հաղորդակից է դարձնում Կուկունյանին ու նրա խմբակի անդամներին, համապատասխան հրահանգներ տալիս, այդ թվում՝ հարկ եղած դեպքում դիմելու Պարսկաստանում ապրող հայ հեղինակավոր անհատներին:

1889 թ. Կուկունյանը համախոհներով գալիս է Թիֆլիս: Նրա գործունեությունը արդեն հայտնի էր հայկական լայն շրջաններում: Նրան աջակցություն էին ցույց տալիս ժողովրդի տարբեր խավերի ներկայացուցիչները, հանգանակությամբ միջոցներ էին հավաքում՝ խմբի անհրաժեշտ ծախսերը (ուտելիք, հագուստ, զենք և այլն) հոգալու համար: Բաքվեցի մեծահարուստ Ծատուր աղա Առաքելյանը նվիրում է 6000 ռ., խոստանալով ողջ կարողությունը՝ հաջողության դեպքում²: Կուկունյանին ամենաջերմ աջակցություն էր ցույց տալիս նաև Գր. Արծրունին՝ «Մշակ» լրագրով ու կողմնակիցներով:

Մեծ էր արշավանքին մասնակցել ցանկացողների թիվը. լինում էին դեպքեր, երբ մայրերը նվիրաբերում էին իրենց միամոր զավակներին, կային արշավանքին մասնակցելու ցանկություն ունեցող կանայք³: 1890 թ. աշնանը խումբն արդեն պատրաստ էր: Այն բաղկացած էր 78 մարտիկից, այդ թվում՝ 24 ձիավոր⁴, սակայն տարբեր աղբյուրներ նշում են այլ թվաքանակ⁵:

Որոշում էր կայացվել Կարսից ճանապարհվել սեպտեմբերի 22-ին: Հանգրվանելով Կարսում՝ Կուկունյանը շտապում էր: Նրա վրա չազդեցին Թիֆլիսից եկող նամակ-հորդորները՝ արշավանքը հետաձգելու, ինչպես նաև նորերս կազմավորված Հ.Յ.Դաշնակցության ահազանգն ու նշանավոր դաշնակցական գործիչների՝ Կ. Խատիսյանի, Հ. Արդուրյանի և այլոց

² «Ուրբաթ» (շաբաթաթերթ), Երևան, 22.I.1993:

³ Կուկունյանի խմբի արշավանքը, Վիեննա, 1894, էջ 7-9:

⁴ Նույն տեղում, էջ 12:

⁵ Կ. Եղիազարյան. Մարգիս Կուկունյանի խմբի դատավարությունը և նրա հետագա ճակատագիրը. - ՊԲՀ, 2000, -1, էջ 217 (ծան.):

այցելությունները: Խնդիրն այն էր, որ կտրուկ փոխվել էր ցարական իշխանության վերաբերմունքը դեպի Հայկական հարցը, մասնավորապես, արևմտահայերի՝ թուրքական լծից ազատագրելու հարցը: Բացի այդ՝ արդեն աշուն էր, Հայկական բարձրավանդակի ցուրտ աշունը:

1890 թ. սեպտեմբերի 22-ին խումբը դուրս է գալիս Կարսից և ճանապարհվում դեպի ռուս-թուրքական սահմանը: Ողջ ճանապարհին ժողովուրդը ուղեկցում էր նրան խաչով-խաչվառով, բարեմաղթություններով, երգերով: Ջոկատի անդամները կրում էին ռուս կազակների հագուստ, երկու հրամանատարները՝ զինվորական սպայի ուսադիրներով: Խումբը տանում էր հայկական խորհրդանիշներով երկու դրոշներ: Մահմանն անցնելուց առաջ հրամանատարները ճառ են ասում, բացատրում խմբի առաքելությունը, միաժամանակ հնարավոր ողբերգական ավարտի հավանականությունը:

Հազիվ էր խումբն անցել ռուս-թուրքական սահմանը, երբ Կադզվանից ոչ հեռու հանդիպում է մի քանի քրդերի⁶: Մրանք տեղեկացնում են մոտակա գյուղի քրդերին և շատ չանցած՝ հայտնվում է զինված քրդերի մի խումբ: Տեղի է ունենում ընդհարում: Սեպտեմբերի 23-26-ին Կուկունյանի խումբը ստիպված է լինում պաշտպանվել քուրդ զինյալների, թուրք զինվորների և սահմանապահ կազակների հարձակումներից: Պարզ է դառնում, որ անհնար է ճանապարհը շարունակել, մանավանդ որ ցրտերը սկսվել էին, ինչը նեղում էր մարտիկներին: Մնունդը գրեթե սպառվել էր: Որոշում են վերադառնալ և Երևանի նահանգի գյուղերում ձմեռել:

Ծանր ու աղետալի էր վերադարձի ճանապարհը: Մահմանի վրա՝ Խար գյուղի այգիներում խմբին դիմավորեցին ու շրջապատեցին սահմանապահ կազակները: Մարտիկներին կարգադրված էր չկրակել ռուսների վրա, մինչդեռ վերջիններս կրակում էին հատուկ նշանառությամբ: Նույնիսկ՝ հանգստացող մարտիկների հրացանների կույտի վրա: Խումբը հայտնվում է շրջափակման մեջ և հարկադրված է լինում հանձնվել՝ տալով 12 զոհ: Բանտարկվում է 43, փախչում՝ 69-70 հոգի: Բանտարկվում է նաև Կուկունյանը⁷:

Այսպիսով՝ 1890 թ. սեպտեմբերի 26-ին ավարտվում է Ս. Կուկունյանի խմբի երեք օր տևած, այնքան ոգևորություն հարուցած, հույսեր վառած արշավանքը՝ մազաչափ անգամ վնաս չտալով թշնամուն:

Բանտարկյալներին տեղավորում են Կադզվանի բանտում, այնուհետև տեղափոխում Կարսի բանտը: Թեև արշավանքն ավարտվում է անհաջող, բայց ժողովուրդն իր սիրելի հերոսներին շարունակում է պաշտել ու մեծարել: Նրանց գովաբանում ու ճանապարհում են « կեցցեներով», քաջալերանքի խոսքով ու հուսադրությամբ: Իրենք՝ բանտարկյալները, հուսախաբված, ընկճված չէին: Ս. Կուկունյանին բանտում պահում են առանձին, առաջարկում և կազմակերպում են նրա փախուստը, բայց նա չի համաձայնվում՝ պատճառաբանելով, որ ինքը բաց դատավարություն է պահանջելու, որպեսզի սպացուցի Հայոց դատի արդար բնույթը: Ավելի քան երկու տարի տևած դատավարության ընթացքում խմբի ողջ մնացած մար-

⁶ Կուկունյանի խմբի արշավանքը, էջ 14-15:

⁷ Նույն տեղում, էջ 23:

տիկների դատավճիռը մնում է անփոփոխ, Ս. Կուկունյանը դատապարտվում է 20 տարվա ազատազրկման, 7 տարի տաժանակիր աշխատանքի և մշտական աքսորի⁸: Սակայն արդեն 1906 թ. նա Թիֆլիսում էր՝ ազատվելով ցարական մանիֆեստի շնորհիվ: Այնուհետև մի քանի անգամ բանտարկվում է, վախճանվում է 1913 թ. նոյեմբերի 26-ին Օրյոլի բանտում⁹:

Ուշագրավ է Նոր Բայազետի բանտում անցկացրած Սարգիս Կուկունյանի վերջին օրերի մասին պատմող հուշը: Անկասկած, այն ունի բանահյուսական երանգ, սակայն ճշմարտացի է, համահունչ՝ գոյություն ունեցող համահայկական միջավայրին ու մթնոլորտին: Հուզիչ է հուշագրի բերած այն փաստը, որ այն օրերին, երբ Կուկունյանը եղել է բանտում, քաղաքի ժողովուրդը այնքան ուտելիք է փոխանցել նրան, որ բանտի խոհանոցում ճաշ չի պատրաստվել բանտարկյալների համար¹⁰:

Բնորոշ է նաև անանուն նամակագրի հետևյալ տողերը. «Կուկունյանն իր գործերով զարթեցրեց հայ ազգը խոր քնից... յուրաքանչյուր ուրախ սեղանի ժամանակ առաջին կենացը հայրենիքին է նվիրված լինում, երկրորդը հայրենիքի նախավկա Կուկունյանին... 1890 թվականին ծնունդ է առնում ազգը... Այսուհետև Կուկունյանն էլ չի պատկանում ո՛չ իրեն, ո՛չ էլ իր ծնողներին, այլ կազմում է ամբողջ ազգի սեփականությունը. նրա անունը պիտի անցնի պատմության էջերը... Աստված անխիղճ կլինի, եթե չազատի Կուկունյանին դաժան բռնակալների ձեռքից...»¹¹:

XIX դարավերջի – XX դարասկզբի հայ հասարակական-քաղաքական միջավայրը բարենպաստ էր բանահյուսության ստեղծման ու կենցաղավարման համար և պատահական չէն գրավոր ու բանավոր ավանդույթներով մեզ հասած երգերը: Տակավին նոր բանտարկված կուկունյաններին նվիրված երգի մի նմուշ է բերվում «Կուկունյանի խմբի արշավանքը» գրքույկում¹²: Գրքույկի հեղինակը հետևյալն է գրում. «Օր օրի վրա ժողովրդի համակրությունը սաստկանում է. ստեղծվում են բազմաթիվ ոտանավորներ, երգեր՝ նվիրած խմբին, նրա գործերին: Դրանք բերանից բերան են անցնում, կրկնվում, երգվում»¹³:

Կուկունյանի մասին երգերը մի ամբողջական ցիկլ են, և քննությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ դրանցում ներկայացված է Կուկունյան անհատ գործչի կյանքի որոշակի փուլեր՝ սկզբից մինչև վախճանը:

Մեզ հասած ամենավաղ հրատարակված երգը հայտնի է նաև «Կուկունյանի երգ» վերնագրով («Երբ այլեկոծ ծովի վրա Իմ մակույկը խորտակվի» սկզբնատողերով)¹⁴: Առաջին անգամ տպագրվել է «Աղբյուր» ամսագրում¹⁵, այնուհետև ունեցել է մի շարք հրատարակություններ, ընդհուպ մինչև մեր օրերը: Ահա այն.

⁸ Կ. Եղիազարյան. նշվ. աշխ., էջ 217:

⁹ Նույն տեղում, էջ 220:

¹⁰ «Ուրբայթ», 19.III.1993:

¹¹ Կուկունյանի խմբի արշավանքը, էջ 30:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Քրիստափոր Թադևոսյանի բանաստեղծությունները, Թիֆլիս, 1890, էջ 45:

¹⁵ «Աղբյուր» (Թիֆլիս), 1890, -12, էջ 447:

Երբ արեկոճ ծովի վրա,
Իմ մակույկը խորտակվի՝
Ես փրփրադեզ այաց միջին,
Դեռ իմ հույսս չեմ կտրեր:

Բոլոր ուժով և համարձակ,
Բազուկներս կշարժեմ,
Ալիքները պատառելով,
Դեպի ավիր կը թռչեմ¹⁶:

Երգի հերոսը խանդավառ իր ընտրած գաղափարով ու ճանապարհով, որին ինքն անդավաճան սիրով նվիրվել է, պատրաստվում է կովելու քաջի նման, իսկ եթե կովելով պարտվի ու գնա դեպի անդունդ, ապա.

Անհավասար այս կովի մեջ,
Թե ուժերս ինձ թողնեն,
Ալիքները հորձանք տալով,
Թե դեպ անդունդ ինձ նետեն:

Այն ժամանակ գեթ սփոփանք,
Ես կգտնեմ նրա մեջ,
Որ մեռնում եմ քաջի նման,
Կոխվ տալով մինչև վերջ¹⁷:

Երգի պատմական ատաղձը հուշում է, որ այն ստեղծվել է Կուկունյանի խմբի գործունեության սկզբնական՝ կազմակերպական շրջանում: Վերն ասվեց, որ Արևմտյան Հայաստան ոտք դնելուց առաջ հրամանատարներից մեկը՝ Մարդարը, բոցաշունչ խոսք է ասում և շեշտում հենց այն գաղափարի կարևորությունը, որը նշվում է երգում:

Հաջորդ երգը, որն առաջին անգամ տպագրվել է վերը հիշատակված «Կուկունյանի խմբի արշավանքը» գրքույկում, կոչվում է «Ժողովրդի ըսածը Կուկունյան խմբին» («Մնաք բարյա վ, սուր, հրացան» սկզբնատողով), քանիցս վերահրատարակվել է: Տրամաբանորեն այս երգը առաջինի շարունակությունն է. ամեն ինչ վերջացած է, անարգ թշնամին պղծեց հերոսի սուրբ սերը, սակայն ըստ երգի, նրան չեն տանջում բանտն ու կապանքները, այլ այն, որ այլևս չի կարող մարտնչել թշնամու դեմ.

Բայց ծանր չեն կապանքներս,
Մութ բանտը չէ ինձ տանջող.

Ո՛հ, այլևս թշնամու դեմ,
Չեմ անհողողող մարտնչող¹⁸:

¹⁶ Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր (այսուհետև՝ ՀԺՌԶԵ), աշխատասիրությունը Ա. Ս. Ղազիյանի, Երևան, 1989, էջ 143:

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ Նույն տեղում, էջ 142:

Աքսորավայրում տաժանակիր աշխատանք ու շղթաներ կրելուց հետո վերադառնալով հայրենիք՝ Կուկունյանը շարունակում է պայքարն այս անգամ ցարական իշխանությունների դեմ¹⁹: Ի դեպ, նույն ուղին ընտրեցին նաև խմբի ողջ մնացած անդամները, ինչպես, օրինակ, Եփրեմը (1868–1912), ով հետագայում դարձավ պարսկական հեղափոխության ղեկավարներից մեկը և գոհվեց Պարսկաստանում²⁰:

Վերը նշվեց, որ Կուկունյանը հրաժարվել է բանտից փախչել, որը կազմակերպել էին ընկերները: Նա որոշել էր դատարանում ապացուցել, որ խմբի նպատակը քաղաքական էր և ուղղված էր թուրք իշխանությունների դեմ: Սակայն խմբի անդամներին դատեցին որպես սովորական քրեական հանցագործներ, ինչպես երգն է ասում՝ «անպատվության դրոշմ դրեց սուրբ գործի վրա»:

Կենցաղավարել է նաև մի ստեղծագործություն, որը «Երբ ալեկոճ ծովի վրա...» երգի տարբերակն է՝ նույն սկզբնատողով, վերջից երկու քառատողի հավելմամբ, որոնցում նշվում է, որ երգի հերոսը, նաև հեղինակը՝ Կուկունյանն է.

Ես Կուկունյան Սարգիս անուն,
Աքսորման մեջ ինկած եմ,
Ազատության սիրույն համար,
Կյանքս ու հոգիս զոհած եմ:

Ձեռքերս շղթա, ոտքերս շղթա,
Մութ բանտին մեջ ինկած եմ,
Հայրենիքի սիրույն համար,
Կյանքս ու հոգիս զոհած եմ²¹:

Երկտողը կրկնվում է, «ազատություն» բառը փոխարինված է « հայրենիք» բառով: Երգի լեզուն որոշ փոփոխություններ է կրել: « Հառաչանք վշտացյալ սրտի Սարգիսյան Կուկունյանի» վերնագիրը ստացել է հետագա բանավոր կենցաղավարման ընթացքում, հավանաբար, համահունչ երգի բովանդակությանը՝ հառաչանք և ոչ ողբ, սուգ:

«Թողել եմ վաթանս, ընկել դարբեդար» սկզբնատողով երգը, որը տպագրվել է «Կուկունյանի երգը» վերնագրով, հորինված է հանրահայտ « Կռունկի» ազդեցությամբ, նույնիսկ վերջինիս որոշ արտահայտչամիջոցների, ոճերի օգտագործմամբ. «Կռունկ, մեր աշխարհեն խապրիկ մը չունի՞ս» տողին փոխարինել է «Կռունկ, մեր վաթանից ի՞նչ լուր բերիր ինձ»: Երգի՝ «Թե չմեռնեմ կտեսնեմ նորանց մինչ նոր դար» տողը ենթադրել է տալիս, որ այն ստեղծվել է մինչև XX դարը: Երգում թվարկված հարազատների, վաթանի հանդեպ բացահայտված սիրուց ու կարոտից ելնելով՝ կարելի է ասել, որ հանրահայտ «Կռունկը» անմիջական ազդեցություն է թողել այս երգի վրա ոչ միայն արտահայտչամիջոցներով, այլև հայ պան-

¹⁹ Կ. Ե դ ի ա գ ա թ յ ա ն. նշվ. աշխ., էջ 221:

²⁰ Հայ ժողովրդի պատմություն, հ. VI, 1981, էջ 236:

²¹ ՀԺՌՁԵ, էջ 144:

դուխտին բնորոշ կարոտի պոռթկումներով: Այսպես՝ «Ասիր նրանց՝ [հարազատներին – Ա. Ղ.] կարոտը չի տալ ինձ դադար»:

Երգը հորինված է առաջին դեմքով, ենթադրում ենք, որ այն Կուկունյանն է հեղինակել.

Կռունկ, ես Կուկունյանն եմ, հոգիս վիրավոր,
Ցավերս մեկ չէ, հազար չէ, այլ բյուրավոր,
Կօզնե ինձ սուրբ Մարգիս, գորեղ ձիավոր,
Կռունկ, մեր վաթանից ի՞նչ լուր բերիր ինձ²²:

«Շղթայակապ բանտում նստած» սկզբնատողով երգում հերոսը ներկայացնում է իր՝ տաժանակիր աշխատանքի դատապարտվածի հոգեվիճակը.

Շղթայակապ բանտում նստած կողբամ,
Մն է տարին, ամիս, շաբաթ, օր իսկ ժամ,
Ազատության դուռը փակ է առաջիս,
Մտիկ տվող չկա ցավ ու հառաչիս²³:

Մակայն հերոսը չի կորցնում հոգու արիությունը, փրկության, ազատության հույսը.

Կրգա փրկիչ, ազատիչ սուրբ հրեշտակ,
Չի թողնիլ ինձ բռնության լծի տակ,
Նա կսրբե ճակատիս քսված անարգ մուր,
Թույլ չի տալ, որ քամեմ մահվան դառն մրուր²⁴:

Ս. Կուկունյանի անվան շուրջ ստեղծված երգերի շարքը ավարտվում է «Հեռացել եմ հայրենիքից» սկզբնատողով երգով, որը գրի է առնվել 1962 թ. մի մեծահասակ բանասացից: Վերջինս երգը լսել էր հայրենակիցներից:

Ի մի բերելով Ս. Կուկունյանի և նրա խմբի շուրջ ստեղծված երգերը, հուշերն ու գրույցները՝ ակնառու է դառնում, որ հայ ժողովրդի բանահյուսական կենցաղում կենդանի է եղել ու հարատևել հայրենասեր, կյանքը հայրենիքին նվիրելու պատրաստ անհատների պաշտամունքն ու սերը, որը դրսևորվել է երգերի, գրույցների, հուշերի, նաև այլ ստեղծագործությունների միջոցով:

²² ՀԺՌՁԵ, էջ 145:

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

САРКИС КУКУНЯН В НАРОДНЫХ ПЕСНЯХ
(К 100-летию со дня смерти)

АЛВАРД ГАЗИЯН

Резюме

Под влиянием результатов трактата Берлинского конгресса 1878 г. в передовых кругах армянской интеллигенции возродилась идея вооруженной борьбы против турецкого гнета и освобождения от него западных армян. Одним из первых, кто в 90-х гг. XIX столетия воплотил эту идею в жизнь был Саркис Кукунян (1866–1913). Он собрал вокруг себя группу единомышленников, деятельность которой получила большую поддержку в широких кругах армянской общественности.

Современники сохранили воспоминания о патриотизме бойцов отряда С. Кукуняна и об их широкой популярности, складывались песни о них, лично о С. Кукуняне, на определенных этапах его жизни, от начала его деятельности до нелегких дней в тюрьме, на каторжных работах.

SARGIS KUKUNYAN IN FOLKSONGS
(To the 100th death anniversary)

ALVARD GHAZIYAN

Summary

Under the influence of Berlin Congress treaty of 1878, in the highest circles of Armenian intelligentsia an idea about armed struggle against Turkish oppression and liberation of Western Armenians revived. Among the first fighters who embodied this idea in the 90s of the 19th century was Sargis Kukunyan. He succeeded in forming a group of adherents, the activities of which received support and encouragement in wide circles of Armenian community.

His contemporaries kept memories about the patriotism of the fighters, their popularity, made up songs about them and about Kukunyan, about different periods of his life including the first days of his career and days having hard labor in prison.